Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1 MAR 2010

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

# ՍՏԱՏՈՒՏ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

361
Հ-24

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴ.
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում
1925

361
Հ-24

*Հաստատված է Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության կողմից 1924 թ. 11 հունվարի:*

## ПОСТАНОВЛЕНИЕ СОВЕТА НАРОДНЫХ КОМИССАРОВ

**164. О предоставлении Центральному Комитету Помощи Армении права открывать свои филиалы на всей территории Союза ССР.**

Совет Народных Комиссаров Союза Советских Социалистических республик постановляет:

Предоставить Центральному Комитету Помощи Армении, действующему на основании статута, утвержденного Президиумом Центрального Исполнительного Комитета ССР Армении 11 января 1924 г. право открывать свои филиалы на всей территории Союза ССР.

Председатель СНК Союза ССР
**А. РЫКОВ**

Управляющий делами СНК Союза ССР
**Н. ГОРБУНОВ**

22 октября 1924 года

37743

05 JUN 2013

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ։

**164. Հայաստանի Օգնության Կենտրոնական Կոմիտեյին Ս. Խ. Հ. Միության ամբողջ տերրիտորիայում ճյուղեր բանալու թույլտվության մասին։**

*Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումը.—*

*Իրավունք տալ Հայաստանի Օգնության Կենտրոնական Կոմիտեյին, վորը գործում է Հայաստանի Ս. Խ. Հանրապետության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունից 1924 թ. հունվարի 11-ին հաստատված ստատուտի հիման վրա, բաց անել ճյուղեր Ս. Խ. Հ. Միության ամբողջ տերրիտորիայում։*

*Նախագահ Ս. Խ. Հ. Միության Ժողկոմխորհի՝*

**Ա. ՐԻԿՈՎ**

*Գործերի վարիչ Ս.Խ.Հ. Միության Ժողկոմխորհի*

**Ն. ԳՈՐԲՈՒՆՈՎ**

*22 հունվարի 1924 թ.*
*(Մոսկվա)*

# ՍՏԱՏՈՒՏ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

### *Ա. ՀՕԿ-Ի ՆՊԱՏԱԿԸ ՅԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ*

*1. Հայաստանի Օգնության Կոմիտեյի նպատակն է—*

ա) Աջակցել յերկրի տնտեսական յեվ կուլտուրական շինարարությանը.

բ) Օգնել Հայաստանի ազգաբնակության սովի յեվ այլ աղետների ժամանակ։

2. Կոմիտեն իր նպատակներին հասնելու համար գործում է ինչպես իր, նույնպես յեվ պետական ու հասարակական ապարատների միջոցով։

3. Կոմիտեն սովի յեվ այլ աղետների դեմ մաքառելու համար—

*ա) Աջակցում է նույն նպատակով գործող հիմնարկություններին.*

*բ) Մատակարարում է կարոտյալներին մթերք.*

գ) Հիմնում է ճաշարաններ և թեյարաններ.

դ) Բաշխում է հագուստեղեն.

ե) Կազմակերպում է բժշկական օգնություն, հիմնելով ժամանակավոր հիվանդանոցներ, բուժարաններ, դեղատներ, թռուցիկ բժշկական խմբեր և այլն։

4. Հայաստանի տնտեսական շինարարության գործին նպաստելու համար կոմիտեն—

ա) Մատակարարում է գյուղացիներին սերմացու, գյուղատնտեսական գործիքներ, լծկաններ, կթաններ.

բ) Բաշխում է անհրաժեշտ դեղորայք անասունների, այգիների և բանջարանոցների վարակիչ հիվանդությունների դեմ.

գ) Աջակցում է ավերված գյուղերի վերաշինության.

դ) Տարածում է գործնական և տեխնիկական գրքույկներ.

ե) Աջակցում և հիմնում է գյուղատնտեսական և առևտրա-արդյունաբերական ձեռնարկություններ։

5. Կուլտուրական շինարարությանը զարկ տալու համար՝

ա) Օգնություն է հասնում ժողովրդական դպրոցներին, աջակցելով յեղածների պահպանմանը և նորերի բացմանը.



բ) Կառուցում և վերանորոգում է դպրոցական շենքեր.

գ) Մատակարարում է գիտական պիտույքներ և գործիքներ, դպրոցական պարագաներ.

դ) Օժանդակում է Հայաստանի կուլտ.-կրթական հիմնարկություններին.

ե. Նպաստում է յերկրի կուլտուրական աշխատավորների, արվեստագետների, գիտնականների և այլն վիճակի բարելավման։

6. Վերոհիշյալ նպատակներին մասնակցելու համար Կոմիտեն հիմնում է հետևյալ ֆոնդերը.

ա) Հանրօգուտ կառուցումների ֆոնդ, ջրանցքների կառուցում, ճահիճների չորացում և այլն.

բ) Գյուղատնտեսական ֆոնդ.

գ) Կուլտուր-կրթական ֆոնդ.

դ) Բժշկա-սանիտարական ֆոնդ,

վորոնց համար կոմիտեն անում է

ա) Բանավոր և գրավոր պրոպագանդա.

բ) Հատուկ նվիրակներ և պատգամավորներ է ուղարկում արտասահման.

գ) Մշտական և սերտ հարաբերություն է պահպանում արտասահմանյան այն կազմակերպությունների հետ, վորոնք կարող են օգտակար լինել օգնության և շինարարական գործին։

## Բ. ՈԳՆՈՒԹՅԱՆ ՅԵՂԱՆԱԿԸ

7. ՀՈԿ-ը սկզբունքով ընդունում է աշխատանքային ոգնությունը, հանրոգուտ աշխատանքների կազմակերպության միջոցով։

8. Անվերադարձ ոգնություն տրվում է վորպես բացառություն Գլխավոր Վարչության վորոշմամբ։

## Գ. ՀՈԿ-Ի ՄԻՋՈՑՆԵՐԸ

9. ՀՈԿ-ի միջոցները կազմում են.

ա) Ընդհանուր ժողովարարություններ.

բ) Նվիրատվություններ՝ դրամով, պարենով, շորեղենով, դեղորայքով և կուլտուրական շինարարության զանազան պարագաներով.

գ) Զանազան ընկերությունների, միությունների և հասարակական կազմակերպությունների կամավոր տուրքեր.

դ) Յեկամուտներ Կոմիտեյի ձեռնարկություններից, ներկայացումներից, դասախոսություններից, վիճակախաղից և այլն։

## Դ. ՀՈԿ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

10. Կոմիտեն կազմված է. 1. Համագումարից. 2. Գլխավոր Վարչությունից, վոր գտնվում է Յերևանում, և 3. Վերստուգիչ հանձնաժողովից։

11. Գլխավոր Վարչությունը բաղկացած է 15 անդամից և 5 փոխանդամից, վորոնց ընտրում է համագումարը՝ մինչև մյուս, հերթական համագումարը։

12. Վարչության նախագահին ընտրում է համագումարը, իսկ յերկու փոխ-նախագահներին, քարտուղարին և գանձապահին—վարչությունը։

13. Վերստուգիչ հանձնաժողովը բաղկացած է յերեք անդամից և յերկու փոխանդամից, վորոնց ընտրում է համագումարը՝ մինչև մյուս հերթական համագումարը։

14. Վերստուգիչ հանձնաժողովը խորհրդակցական ձայնով իրավունք ունի մասնակցելու թե Գլխավոր Վարչության և թե ճյուղերի վարչության նիստերին։

## Ե. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

15. Հերթական համագումար հրավիրվում է տարին մեկ անգամ Յերևանում։

Համագումարին իրավունք ունեն մասնակցելու 1. հիմնադիր անդամները, 2. ճյուղերի ներկայացուցիչները, 3. Գլխավոր Վարչության-

նը, 4. Վերստուգիչ Հանձնաժողովը։ Գլխավոր Վարչության վորոշմամբ համագումարին երավունք ունեն մասնակցելու նաև այն հիմնարկությունները, վորոնք նպատակ ունեն նպաստել Հայաստանի օգնության գործին։

16. Հարկ յեղած դեպքում հրավիրվում է արտակարգ համագումար

ա) Գլխավոր Վարչության վորոշմամբ և

բ) Ճյուղերի $1/_3$-ի ցանկությամբ։

17. Համագումարում խնդիրները վճռվում են ներկա յեղող անդամների ձայների մեծամասնությամբ։

ՀՕԿ-ի լիկվիդացիան, նաև կանոնադրության փոփոխումը համագումարում վորոշվում է ձայների $2/_3$-ով։

## Զ. ՀՕԿ-Ի ՃՅՈՒՂԵՐԸ

18. ՀՕԿ-ն ունի իր ճյուղերը։

19. Կոմիտեյի ճյուղերը բացվում են կամ Գլխավոր Վարչության անդամների անմիջական ղեկավարությամբ և կամ նրա կողմից լիազորված անձանց նախաձեռնությամբ։

20. Կոմիտեյի ճյուղերը կազմակերպվում են ներկա ստատուտի մեջ հիշված հիմունքներով



տեղական ազգային, հասարակական մարմինների և գործիչների նախաձեռնությամբ, համաձայն տեղական պայմանների. ճյուղերն ունեն անդամներ անդամավճարով. վճարի չափը վորոշում են ճյուղերը։

## Է. ՀՕԿ-Ի ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

21. ՀՕԿ-ն իր նպատակներով և կազմակերպման սիստեմով, անկախ իր անդամների քաղաքական դավանանքից, հասարակական մի մարմին է և հայտարարում է իրան քաղաքական և կուսակցական պայքարի հանդեպ չեզոք։

22. ՀՕԿ-ը յենթակա յե Ս. Խ. Հայաստանի Կենտգործկոմի հսկողության և իր ամբողջ գործունեյության մեջ յենթարկվում է Հանրապետության օրենքներին։

23. Կոմիտեն իր տրամադրության յենթակա դրամները և ընդհանրապես գույքը գործադրում է սույն ստատուտով նախատեսնված նպատակների սահմաններում ըստ իր հայեցողության, իսկ իր նպատակներին համապատասխան հատուկ նվերները գործադրում է համաձայն նվիրատվի կամքի։

24. Կոմիտեյի հասցեյով ուղղված դրամները,

իրերը և ընդհանրապես ամբողջ գույքն ազատ են պետականացումից, գրավումից և այլ սահմանափակիչ օրենքներից և միաժամանակ արտաքին փոխադրությունների ընթացքում օգտվում են պետական գույքերի վերաբերյալ արտոնություններով։

25. ՀՕԿ-ը իրավական անձ է և ունի իր սեփական կնիքը։

## Ը. ՀՕԿ-Ի ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ

26. ՀՕԿ-ի լիկվիդացիան, ինչպես և նրա գույքի հանձնումը Խորհրդային Հայաստանի պետական—հասարակական վորևե հիմնարկության՝ վորոշում է Համագումարը ձայների $^2/_3$-ով։ Լիկվիդացիայի դեպքում Գլխավոր Վարչությունը յերեք ամիս առաջ այդ մասին հայտնում է ճյուղերին և հավաքում նրանց կարծիքը։

ՀՕԿ-ի Կենտրոնական Վարչության հասցեն՝

ՅԵՐԵՎԱՆ, Նալբանդյան փողոց, № 50
Հեռախոս № 261։

ЭРИВАНЬ (ССРА)
Центр. Комитету Помощи Армении

ERİVAN (Arménie)
Comitè de secours d'Arménie

ՀՀ Ազգային գրադարան
NL0221739

42.912